ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 03 >> << ապրիլ >> 2018 թ N 40

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 12-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Վայոց ձորի մարզի Վերնաշենի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2018 թվականի մարտի 14-ի N34 գրությունը և Ստեփան Ստեփանյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2018 թվականի ապրիլի 3-ից Ստեփան Ստեփանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության «Վայոց ձորի մարզի Վերնաշենի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր 5 (հինգ) տարի ժամկետով:
2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ու կրթության, մշակույթի և սպորտի վարչություններին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատաքները:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ